

Հաստատված է

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի
գիտական խորհրդի որոշմամբ

Ռեկտոր

Ա.Խաթեկյան

21.06.2016թ.



**ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) ներքին կարգապահական կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) ընդունվում և նրանում փոփոխություններ կատարվում են Ակադեմիայի ռեկտորատի կողմից և հաստատվում՝ ռեկտորի հրամանով:

2. Կանոնակարգը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ապահովում է օրենքներով սահմանված իրավունքների ու պարտականությունների կատարումը և դրանց հիման վրա կանոնակարգում է Ակադեմիայի ընդհանուր աշխատանքները, աշխատողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքային կուլտուրայի, էթիկական կանոնների պահպանման, կարգապահության, աշխատանքի ռեժիմի, աշխատանքային օրերի և ժամերի, հանգստի, աշխատողների խրախուսման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դրույթները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր և առանձին աշխատողների աշխատանքային առանձնահատկությունները:

3. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են Ակադեմիայի բոլոր աշխատողների և կառուցվածքային ստորաբաժանումների վրա:

4. Առանձին ստորաբաժանումներ կամ աշխատողներ կարող են ունենալ աշխատանքային առանձնահատկություններ, որոնք կարգավորվում են Ակադեմիայի իրավական ակտերով:

5. Սույն կանոնակարգով սահմանվում են նաև Ակադեմիայի ուսանողների ներքին կարգապահական և ուսուցման ընդհանուր կանոնները:

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

6. Ակադեմիայի աշխատողների աշխատանքային շաբաթը հնգօրյա է: Առանձին աշխատողների համար, ռեկտորի հրամանով, կարող է սահմանվել վեցօրյա աշխատանքային շաբաթ:

7. Աշխատողների աշխատանքային օրը սկսվում է ժամը 9.00-ին և ավարտվում՝ ժամը 16.30-ին: Առանձին անհրաժեշտ դեպքերում աշխատանքային օրը կարող է երկարացվել մինչև ժամը 18.30-ը:

Պրոֆեսորադասախոսական և գիտական աշխատողների աշխատաժամանակի ռեժիմը և գրաֆիկը որոշվում է՝ հաշվի առնելով դասավանդման, գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպամեթոդական, դաստիարակչական աշխատանքների ծավալը: Առանձին աշխատողների համար կարող են սահմանվել գիտամանկավարժական աշխատանքների կատարման չնորմավորված ծավալային կարգ:

8. Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի աշխատանքային շաբաթը չի կարող գերազանցել երեսունվեց, իսկ մնացած աշխատողների աշխատանքային շաբաթը՝ քառասուն ժամը:

9. Աշխատանքային օրվա ընթացքում աշխատողների ընդմիջումը երեսուն րոպե է՝ ժամը 12.00-ից ժամը 13.00-ի սահմաններում: Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ առանձին ստորաբաժանումների ղեկավարներ կարող են փոփոխել ընդմիջման ժամերը նույն ժամանակով: Հանգստի և սնվելու համար ընդմիջումը չի ներառվում աշխատաժամանակում, և աշխատողն այն օգտագործում է սեփական հայեցողությամբ: Աշխատողն իրավունք ունի ընդմիջման ժամանակահատվածում բացակայելու աշխատավայրից:

10. Հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար ամենամյա արձակուրդ տրամադրվում է աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմին, որպես կանոն, արձակուրդ տրամադրվում է ուսումնական տարվա ավարտից հետո:

Արձակուրդի ընթացքում պահպանվում է աշխատողի աշխատատեղը և վճարվում է միջին աշխատավարձ:

11. Ակադեմիայի առանձին ստորաբաժանումների կամ աշխատողների համար շաբաթ օրերին կարող են սահմանվել հերթապահություններ: Աշխատանքային շաբաթը, ներառյալ հերթապահությունը, շաբաթվա ընթացքում չեն գերազանցում քառասուն ժամը, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

12. Պրոֆեսորադասախոսական աշխատողներն իրավունք ունեն իրենց հայեցողությամբ, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի շրջանակներում շարադրելու առարկան, ընտրելու գիտական հետազոտությունների թեմաներ և դրանք իրականացնելու իրենց ընտրած մեթոդներով:

13. Ակադեմիայում աշխատանքի ընդունվում են ռեկտորին համապատասխան դիմում ներկայացնելով: Դիմումի հետ միաժամանակ կարող են ներկայացվել երաշխավորագրեր և միջնորդագրեր: Դիմումը քննարկվում է ռեկտորի կողմից և, դրական որոշումից հետո, աշխատանքի ընդունվել ցանկացող անձը կադրերի բաժին է ներկայացնում աշխատանքային օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերը: Առանձին դեպքերում աշխատողի ընտրությունը կարող է կատարվել մրցութային կարգով: Ընտրովի պաշտոնների ընտրությունն իրականացվում է Ակադեմիայի առանձին կանոնակարգով:

14. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության և նշանակման կարգը սահմանվում է օրենսդրությամբ և Ակադեմիայի կանոնակարգերով:

15. Ակադեմիայում աշխատանքի ընդունելիս համապատասխան ստորաբաժանման ղեկավարը անձին ծանոթացնում է աշխատանքի պայմաններին, ներքին կարգապահական կանոններին, անվտանգության, սանիտարական, հակահրդեհային կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող այլ իրավական

ակտերին: Նշված կարգերին աշխատողի ծանոթացումը հավաստվում է աշխատանքային պայմանագրի ստորագրության փաստով:

16. Ակադեմիայի աշխատողները այլ աշխատատեղերում համատեղությամբ կարող են աշխատել ռեկտորի համաձայնության դեպքում: Ակադեմիայում համատեղությամբ կարող են աշխատել հիմնական գործատուի համաձայնությամբ: Համատեղությամբ աշխատողի աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում համատեղությամբ աշխատողին արձակման նպաստ չի վճարվում:

17. Ակադեմիայում այլ աշխատանքի տեղափոխվելու դեպքում աշխատողի հետ կնքվում է նոր աշխատանքային պայմանագիր:

18. Աշխատողն իրավունք ունի իր նախաձեռնությամբ լուծել անորոշ ժամկետով կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, մինչև նրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ծանուցելով Ակադեմիային: Ծանուցման ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ Ակադեմիան պարտավոր է ձևակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը և աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ:

Ակադեմիան կարող է ժամկետը լրանալու պատճառով լուծել որոշակի ժամկետով աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով աշխատողին աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ակադեմիայի հետ աշխատողի աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել, և աշխատողը ենթակա է աշխատանքից ազատման աշխատանքային կարգապահության կանոնները կոպիտ խախտելու դեպքերում՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: Աշխատողի աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել նաև աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Աշխատողի կողմից աշխատանքային կարգապահության կանոնները խախտելու դեպքերում աշխատողը պետք է ներկայացնի գրավոր բացատրություն՝ եռօրյա կամ ռեկտորի կողմից որոշված այլ ողջամիտ ժամկետում: Համապատասխան ստորաբաժանման ղեկավարը կարգապահության կանոնները խախտելու մասին զեկուցում է ռեկտորին կամ պրոռեկտորին: Գրավոր բացատրություն տալուց

աշխատողի չներկայացնելը կամ հրաժարվելը արձանագրվում է ստորաբաժանման ղեկավարի և առնվազն մեկ աշխատողի կողմից:

Աշխատանքային պայմանագրի լուծումը և վերջնահաշվարկը ձևակերպվում է ռեկտորի հրամանով:

19. Ակադեմիայի կողմից գործուղման մեկնած աշխատողներին, գործուղման ամբողջ ժամանակահատվածում, երաշխավորվում է աշխատատեղի և աշխատավարձի պահպանումը, ինչպես նաև աշխատողին վճարվում է օրապահիկ և հատուցվում են գործուղման հետ կապված ծախսերը:

Որպես Ակադեմիայի աշխատողներ՝ օտարերկրյա ուսումնական հաստատություններից, գիտական կենտրոններից և այլ կազմակերպություններից հրավիրված անձանց Ակադեմիան թույլատրում է մեկնելու՝ հրավիրելու մասին պատշաճ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում: Այդ դեպքում Ակադեմիան կարող է մասամբ կամ ամբողջովին հատուցել ճանապարհածախսը:

20. Աշխատավայր չներկայանալու դեպքում աշխատողը նույն օրն իր անմիջական ղեկավարին գրավոր (կամ եթե հնարավոր չէ բանավոր՝ կապի միջոցներով) տեղեկացնում է չներկայանալու պատճառների մասին:

Հարգելի պատճառները պետք է լինեն հիմնավորված:

Հիվանդության դեպքում աշխատողը յոթօրյա ժամկետում Ակադեմիային պատշաճ ծանուցմամբ ներկայացնում է նաև հիվանդությունը հաստատող փաստաթուղթ: Նշված կարգը չպահպանելու դեպքում աշխատողի բացակայությունը համարվում է անհարգելի՝ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված հետևանքներով:

21. Ակադեմիայի կենցաղի սպասարկման աշխատողների համար կարող են սահմանվել աշխատանքների կատարման ծավալային կարգ: Աշխատասենյակներում նման աշխատանքները, որպես կանոն, կատարվում են մինչև աշխատանքային օրվա սկիզբը կամ ավարտից հետո: Առանձին ստորաբաժանումների կենցաղի սպասարկման աշխատողների համար կարող են սահմանվել վեցօրյա աշխատանքային շաբաթ կամ հերթապահություններ:

22. Ակադեմիայի և աշխատողի իրավունքներն ու պարտականությունները.

Ակադեմիայի աշխատողն իրավունք ունի՝

- աշխատելու աշխատանքային անհրաժեշտ և ապահովված պայմաններում.
- օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանելու իր աշխատանքային իրավունքները.
- աշխատանքի դիմաց ստանալու վարձատրություն.
- միավորվելու արհեստակցական կազմակերպություններում:

Ակադեմիայի աշխատողը պարտավոր է՝

- աշխատանքները կատարել պատշաճ որակով, սահմանված կարգով և ժամկետներում.
- ենթարկվել Ակադեմիայի սահմանած ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող այլ իրավական ակտերին.
- կատարել Ակադեմիայի լիազոր անձանց օրինական հանձնարարությունները:

Ակադեմիան իրավունք ունի՝

- ստուգելու աշխատողի կատարած աշխատանքների ընթացքը, որակը, պատշաճ և ժամանակին կատարումը.
- աշխատողից պահանջել պահպանելու աշխատանքային օրենսդրությունը և Ակադեմիայի սահմանած ներքին կարգապահական կանոնները, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող այլ իրավական ակտերը.
- աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով քննարկելու և լուծելու աշխատողի կարգապահական, նյութական պատասխանատվության հարցերը, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու հարցերը.
- աշխատողից պահանջելու գույքի և այլ անհրաժեշտ միջոցների նպատակային և բարեխիղճ օգտագործում:

Ակադեմիան պարտավոր է՝

- աշխատողին ապահովել պայմանագրով պայմանավորված աշխատանքով, անհրաժեշտ և անվտանգ աշխատանքային պայմաններով և կազմակերպել նրա աշխատանքը.
- ապահովել աշխատողի աշխատանքային իրավունքները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.
- աշխատանքների դիմաց վճարել աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձի չափին համապատասխան.

- հանձնարարված աշխատանքների համար սահմանել ողջամիտ ժամկետ.
- սահմանված կարգով աշխատողին տրամադրել վճարվող և չվճարվող արձակուրդ:

Ա Շ Խ Ա Տ Ո Ղ Ն Ե Ր Ի Խ Ր Ա Խ Ո Ի Մ Մ Ա Ն

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

23. Ակադեմիան հանձնառում է խրախուսման քաղաքականություն՝ իր աշխատողների պարտականությունների պատշաճ և նախաձեռնողական հիմքով կատարելու դեպքերում: Ակադեմիայի աշխատողների խրախուսման առիթ կարող է հանդիսանալ նաև աշխատանքային երկարատև և բարեխիղճ տարիները, Ակադեմիայում ունեցած ավանդը, նորարարությունը, գիտահետազոտական կամ ուսումնական աշխատանքներին ակտիվ մասնակցությունը, Ակադեմիայի հեղինակության բարձրացմանն ուղղված գործողությունները և այլն:

24. Ակադեմիայում սահմանվում են աշխատողների հետևյալ խրախուսման միջոցները՝

- շնորհակալության հայտարարում.
- միանվագ դրամական պարգևատրում.
- աշխատավարձի բարձրացում.
- պատվոգրի հանձնում.
- հուշանվերի հանձնում.
- «ԵԳՊԱ վաստակավոր աշխատող» կոչման շնորհում.
- «ԵԳՊԱ պատվավոր աշխատող» կոչման շնորհում.
- «ԵԳՊԱ վաստակավոր դասախոս» կոչման շնորհում.
- «ԵԳՊԱ պատվավոր դասախոս» կոչման շնորհում.
- «ԵԳՊԱ պատվավոր դոկտորի» կոչման շնորհում.
- «ԵԳՊԱ պատվավոր պրոֆեսորի» կոչման շնորհում.
- կարգապահական տույժի հանում:

Ակադեմիայի Ռեկտորատի կամ Գիտական խորհրդի որոշմամբ կարող են սահմանվել նաև այլ խրախուսման միջոցներ: Խրախուսումները կիրառվում են Ռեկտորատի կամ Գիտական խորհրդի կողմից՝ ռեկտորի հրամանով:

Խրախուսումները կարող են հրապարակվել:

Ակադեմիայում 20 ն ավելի տարիների անբասիր աշխատանքային ստաժ ունեցող և Ակադեմիայից թոշակի անցած նախկին աշխատողներին Ռեկտորատի որոշմամբ կարող է տրվել ամենամսյա օգնություն՝ որոշակի ժամկետով կամ անժամկետ:

Ա Շ Խ Ա Տ Ո Ղ Ն Ե Ր Ի Պ Ա Տ Ա Մ Խ Ա Ն Ա Տ Վ Ո Ի Թ Յ Ա Ն

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

25. Ակադեմիան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու է պատասխանատվության ենթարկել այն աշխատողներին, ովքեր՝

- չեն կատարել իրենց աշխատանքային պարտականությունները կամ անգործություն են ցուցաբերել.
- պատշաճ չեն կատարել իրենց աշխատանքային պարտականությունները.
- իրենց գործողություններով վնասել են Ակադեմիայի հեղինակությանը.
- ցուցաբերել են մանկավարժական կամ դաստիարակչական անհամատեղելի վարքագիծ.
- վնասել են ակադեմիայի գույքը:

26. Աշխատանքային օրենսդրության, աշխատանքային պայմանագրի և սույն կանոնակարգի դրույթների, ինչպես նաև աշխատանքային կարգապահության խախտման դեպքերում սահմանվում են աշխատողների հետևյալ կարգապահական պատասխանատվության միջոցները՝

- նկատողություն.
- խիստ նկատողություն.
- աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

Կարգապահական տույժի կիրառման դեպքում հաշվի են առնվում խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ: Կարգապահական տույժերը կիրառվում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

27. Առանձին դեպքերում՝ մինչև պատասխանատվության կիրառումը, Ակադեմիան կարող է աշխատողին բանավոր կամ գրավոր նախազգուշացում հայտարարել:

28. Ակադեմիայի աշխատողները պարտավոր են բարեխիղճ օգտագործել և պահպանել Ակադեմիայի գույքը, սարքավորումները և այլ ունեցվածքը՝ իրենց բոլոր պատկանելիքներով և հատուցում են իրենց մեղքով պատճառված վնասները:

Է Թ Ի Կ Ա Յ Ի Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

29. Սույն կանոնակարգով սահմանվում են Ակադեմիայում էթիկական նորմերի սկզբունքները և դրանց ապահովման կանոնները:

30. Ակադեմիայի աշխատողների և ուսանողների գործողությունները և փոխհարաբերությունները կառուցվում են էթիկական նորմերի պահպանման, փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության, աստիճանակարգման, օբյեկտիվության, ինչպես նաև օրենսդրությամբ, Ակադեմիայի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ կարգուկանոնի հիման վրա:

31. Ակադեմիայում էթիկայի կանոնները հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա.

1) **բարեվարքություն.** Ակադեմիայի աշխատողները և ուսանողները իրենց վարքագծով պետք է առաջնորդվեն բարոյական սկզբունքներով, ապահովելու համար էթիկական սկզբունքների ու կրթության որակի միջև կապը, որը կնպաստի Ակադեմիայում կոռուպցիայի դրսևորումների կանխարգելմանը:

2) **ազնվություն.** Ակադեմիայի աշխատողները և ուսանողները պետք է ապահովեն, որ իրենց կողմից դրսևորվող վարքագիծը լինի ազնիվ և վստահության արժանի, որը կբացառի ցանկացած խարդախություն, ստախոսություն, խաբեություն, գողություն, շորթում կամ որևէ այլ անազնիվ արարք: Այսպիսի վարքագիծը բացառում է նաև փաստացի քրեական բնույթի որևէ արարք:

3) **ճշմարտապահություն.** Ակադեմիայի աշխատողները և ուսանողները պետք է հավատարիմ լինեն միմյանց հետ թափանցիկ, ճշմարտացի լինելու սկզբունքներին՝

բացառելով միմյանց հարաբերություններում սուտը, էլնելով ազնիվ քաղաքացի և մասնագետ պատրաստելու ցանկություններից:

4) **թափանցիկություն.** Ակադեմիայի աշխատողների և ուսանողների կողմից իրենց գործողությունների հնարավորինս բացահայտ, հստակ, տեղեկությունների հասանելիության սկզբունքով իրականացում: Ակադեմիայի կառավարման և այլ մարմինները պետք է որոշումներ կայացնելիս առաջնորդվեն շահագրգիռ անձանց և աշխատողների մասնակցության ապահովման և ընդունված որոշման հասանելիության սկզբունքներով՝ մինևույն ժամանակ չխախտելով կորպորատիվ և/կամ անձնական տվյալների գաղտնիության սկզբունքները:

5) **այլոց նկատմամբ հարգանք.** Ակադեմիայի աշխատողները և ուսանողները պետք է հարգեն միմյանց, այլոց արժանապատվությունը, ֆիզիկական ու մտավոր իրավիճակը: Հարգանքն իր մեջ ներառում է նաև համագործակցելու ունակությունը՝ աշխատանքային գործընկերության /կոլեգիալության/ շրջանակներում, ինչպես նաև աստիճանակարգման մեջ փոխահարաբերությունների իրավասու և ճիշտ կառուցումը: Այս սկզբունքը կարող է կոչվել պաշտպանելու համար անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, ինչպես նաև պաշտպանված լինելու ֆիզիկական բռնությունից, վիրավորանքներից և այլն:

Դասախոսի կողմից հարգանքն ուսանողի նկատմամբ պետք է առավել ընգծված և դաստիարակչական ուղղություններ ունենա:

Ակադեմիայի ղեկավարությունը պետք է հնարավորինս ապահովի դասախոսների և գիտաշխատողների ակադեմիական ազատության սկզբունքները՝ տվյալ մասնագիտության նախանշված շրջանակներում գիտական և ուսուցողական մտքի ազատ արտահայտումը:

6) **վստահություն.** Ակադեմիայի աշխատողների, ուսանողների միմյանց միջև վստահության ձևավորումը ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման արդյունք են:

Փոխադարձ վստահության ձևավորումը պետք է խթանի գաղափարների ազատ փոխանակումը, ստեղծագործական մտքի իրացումը և անձի զարգացումը:

7) **հաշվետվողականություն.** Ակադեմիայում հաշվետվողականության սկզբունքի իրացումը փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորման հիմքերից է:

Հաշվետվողականությունը պետք է նպատակ ունենա ապահովելու պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունների պատշաճ և պատասխանատու իրականացումը: Հաշվետվողականության ծավալները տարբեր աշխատողների համար կարող է տարբեր լինեն, կախված իրենց լիազորությունների ծավալից:

Հաշվետվողականությունը չպետք է հակասի դասախոսների ակադեմիական ազատությունների սկզբունքին:

8) **արդարացիություն.** Ակադեմիայի աշխատողները պետք է միմյանց նկատմամբ հարաբերվեն անկողմնակալ, առանց խտրականության սկզբունքների: Դասավանդման, ուսանողների գնահատման, հետազոտության, աշխատակազմի առաջխաղացման ցանկացած գործողության հետ կապված արդարացիության ապահովումը պետք է հիմնվի օրինական, թափանցիկ, անկողմնակալ, կանխատեսելի, հետևողական և օբյեկտիվ չափանիշների վրա:

9) **հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն.** Այս սկզբունքը ներառում է առանց խտրականության, արդար, թափանցիկ գործողություններ՝ անկախ սեռից, հաշմանդամության հանգամանքից, ռասայից, էթնիկ պատկանելիությունից, կրոնից, հավատամքից և այլն: Ուսանողների գիտելիքների ստուգման ժամանակ պետք է բացառվի խտրականությունը, կողմնակալությունը, ազգային պատկանելիությամբ տարբերակումը:

10) **էթիկական ղեկավարում և կառավարում.** Ակադեմիայի ղեկավարումը պետք է հիմնվի բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածության և դեմոկրատական կառավարման սկզբունքներով, երաշխավորելով ղեկավարման էթիկական նորմերը: Ակադեմիայում պետք է երաշխավորվի դասախոսների, գիտաշխատողների և ուսանողների մասնակցությունը կառավարմանը՝ հստակ սահմանված եղանակներով:

11) **որակյալ կրթություն.** Ակադեմիայում անվերապահ սկզբունք պետք է լինի կրթության որակի ապահովումը: Ակադեմիայի ղեկավարությունը և դասախոսական անձնակազմը պատասխանատվություն են կրում ուսանողներին որակյալ կրթելու հարցում: Ակադեմիան կրթությունը պետք է իրականացնի բարձր որակավորում ունեցող դասախոսների ներգրավմամբ, ինչպես նաև ուսանողների ուսումնառությունը բարձր առաջադիմության հասցնելու քաղաքականությամբ:

12) անընդհատ անձնական և համակարգային կատարելագործում. Ակադեմիան պետք է նպաստի իր աշխատողների, հատկապես՝ դասախոսների անընդհատ կատարելագործման և զարգացման գործընթացներին, ինչպես նաև Ակադեմիայի ու ակադեմիական կառույցների ընդհանուր զարգացմանը:

13) ինստիտուցիոնալ ինքնավարություն. Ակադեմիան կրթության որակի բարելավման նպատակով պետք է ապահովի կրթական համակարգի դեմոկրատական կառավարումը և կանոնակարգված ինքնավարությունն ու անկախությունը, իրականացնելով չափավոր ապակենտրոն հսկողություն կրթական կառույցների /առավելապես ամբիոնների/ նկատմամբ, նպաստելով ակադեմիական ազատությունների իրացմանը:

14) Միջազգային համագործակցություն. Կրթության որակի բարելավման, համամարդկային գիտական, ուսումնական, ուսումնական նորագույն տեխնոլոգիաների հարցերով համագործակցությունը Ակադեմիայի արտաքին քաղաքականության հիմնաքարն է: Ակադեմիան խրախուսում է դասախոսների միջազգային համագործակցությանը, դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունությանը: Ակադեմիայի միջազգային համագործակցության առանցքում պետք է լինի նաև միջազգային գիտական և ուսումնապրակտիկ կոնֆերանսների, այլ միջոցառումների կազմակերպումն ու մասնակցությունը:

Կ Ր Թ Ա Կ Ա Ն Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

32. Ակադեմիայի և ուսանողի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կնքված «Ուսուցման մասին պայմանագրով»: Ակադեմիայի ֆակուլտետների ղեկնատները և ուսումնական ստորաբաժանումները, մինչև ուսուցման պայմանագրի կնքումը, ուսանողին ծանոթացնում են սույն Կանոնակարգին, ուսանողի իրավունքներին և պարտականություններին, Ակադեմիայի կանոնադրությանը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ուսման տարեկան վճարի մասամբ կամ լրիվ փոխհատուցման կարգին, այլ ուսումնական ու կազմակերպական կանոններին:

33. Ուսանողները պարտավոր են Ակադեմիայի կանոնակարգերով, ուսուցման պայմանագրով սահմանված կարգով, պայմաններով և ժամկետներում կատարել

ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առաջադրանքները, ժամանակին հաճախել դասերին:

34. Ուսանողները դասերին պետք է ներկայանան սահմանված ժամանակին: Ուշացման դեպքում ուսանողը մատչանում պետք է ստանա «*բացակա*»: Ուսանողի բացակայությունները համարվում են հարգելի, եթե ներկայացվում են համապատասխան փաստաթղթեր: Ակադեմիայում սահմանված քանակից ավելի բացակայությունները հիմք են ուսանողին հեռացնելու համար:

35. Ուսանողը դասերի ժամանակ լսարանից դուրս գալ կարող է միայն դասախոսի թույլտվությամբ:

36. Ուսանողը՝ Ակադեմիայի հետ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում պարտավոր է վճարել ուսման վարձը: Ուսման վարձը սահմանված ժամանակին չմուծելու դեպքում Ակադեմիան իրավասու է ուսանողին հեռացնել Ակադեմիայից:

37. Ուսանողի նախաձեռնությամբ՝ Ակադեմիայի և ուսանողի միջև կրթության մասին պայմանագիրը լուծվելու դեպքում Ակադեմիայի կողմից կատարվում է վերջնահաշվարկ, ըստ որի ուսման վճարի մուծման պարտականությունը ավարտվում է ազատման մասին հրամանով նշված ամսաթվին հաջորդող ամսվա 1-ից:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսանողի հեռացվելու դեպքում այդ կիսամյակի համար վճարված ուսման վարձը չի վերադարձվում, իսկ երկրորդ կիսամյակի ուսման վարձը վերադարձվում է հրամանով ազատվելուց հետո հաջորդող ամսվա 1-ից: Ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսանողի հեռացվելու դեպքում ուսման վարձը չի վերադարձվում: Որպես բացառություն ուսման վարձը կարող է վերադարձվել, երբ ուսանողն առողջական պատճառներով ի վիճակի չէ ուսումը շարունակելու և ներկայացնում է բժշկական պատշաճ փաստաթղթեր: Այդ դեպքում վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամանակին, որը սկսում է հաշվարկվել ուսանողի հրամանով ազատվելու օրվանը հաջորդող ամսվա 1-ից:

38. Ակադեմիայում և հատկապես լսարանների մոտ արգելվում է ադմկել, բարձր խոսել, դասերի ժամանակ անհարկի անցուդարձ անել, բացել լսարանների դռները:

39. Դասերի ժամանակ հեռախոսները, համակարգիչները և տեխնիկական, հաղորդակցության այլ միջոցները պետք է անջատվեն: Արգելվում է դասերի ժամանակ օգտագործել հեռախոս, համակարգիչ կամ տեխնիկական ու հաղորդակցության այլ միջոցներ, ինչպես նաև դրանք դնել լսարանի տեսանելի վայրում: Խիստ արգելվում է քննական միջոցառումների ժամանակ օգտվել հեռախոսից կամ արտաքին կապ ապահովող տեխնիկական այլ միջոցներից:

40. Ակադեմիայի անունից այլ կազմակերպություններում և արտերկրում հանդես գալու դեպքում ուսանողները պարտավոր են այդ մասին նախօրոք տեղեկացնել Ակադեմիայի համապատասխան ֆակուլտետի ղեկանատին և ցուցաբերել պատշաճ վարքագիծ՝ բարձր պահելով Ակադեմիայի վարկանիշը:

41. Ակադեմիայի տարածքում ուսանողները պարտավոր են ունենալ ուսանողական տոմս: Ժամը 17.00-ից հետո մուտքը Ակադեմիա թույլատրվում է միայն ուսանողական տոմսի կամ ուսանողական իրավունքները հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում:

42. Անհրաժեշտ դեպքերում Ակադեմիան ուսանողին տրամադրում է հանրակացարան: Հանրակացարանում բնակվելու պայմանները սահմանվում են համապատասխան պայմանագրով:

43. Ուսանողները Ակադեմիայի դասախոսների և աշխատողների նկատմամբ ցուցաբերում են հարգայից վերաբերմունք, ճշտապահություն ու հանդուրժողականություն, ինչպես նաև քաղաքավարի վարքագիծ: Սույն կետով սահմանված կանոնների խախտումը դիտվում է որպես կարգապահական կանոնների կոպիտ խախտում, որը կարող է հանգեցնել նաև ուսանողի Ակադեմիայից հեռացման:

44. Ուսուցման կանոնների նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնում են ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, ֆակուլտետների ղեկանները և ռեկտորի կողմից լիազորված այլ պատասխանատուներ:

Ե Ջ Ր Ա Փ Ա Կ Ի Չ Դ Ր Ո Ի Յ Թ Ն Ե Ր

45. Ոչ աշխատանքային օրերին մուտքն Ակադեմիա արգելվում է: Բացառիկ դեպքերում ռեկտորի կամ պրոռեկտորի կողմից տրվում է մուտքի թույլտվություն:

46. Ակադեմիայի տարածքում արգելվում է ծխել, բացառությամբ ծխելու համար նախատեսված վայրերի:

47. Արգելվում է Ակադեմիայում օգտագործել ոգելից խմիչքներ, բացառությամբ Ակադեմիայի ղեկավարության կողմից միջոցառումների համար նախատեսված դեպքերի և չափերի: Կարգապահական կանոնների կոպիտ խախտում է համարվում ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ Ակադեմիայում գտնվելը:

48. Սույն կանոնակարգով սահմանված կարգապահական կանոնների խախտման դեպքերը, ինչպես նաև Ակադեմիայում այն գործողությունները, որոնք զուգորդվում են հակաիրավական արարքներով, պետք է կանխվեն համապատասխան աշխատողների կողմից, և մեղավորները ենթակա են պատասխանատվության:

49. Օրենսդրությամբ, Ակադեմիայի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու դեպքերում աշխատողի և ուսանողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ ընդհուպ Ակադեմիայից հեռացնելը:

50. Սույն կանոնակարգի կատարման նկատմամբ վերահսկողությունը հանձնարարվում է Ակադեմիայի պրոռեկտորներին և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

- - -